ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Սիսիան **18/04/2025**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 04
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 12 անդամներ:

Բացակա էին՝ Տիգրան Հովսեփյանը, Անահիտ Գևորգյանը, Արայիկ Սուլեյմանյանը, Սաշա Ստեփանյանը, Կարինե Աբելյանը, Հենրիկ Սուքիասյանը, Լուսինե Բաբայանը, Հայկ Հակոբյանը, Հասմիկ Ազոյանը

<u>Ավագանու նիստին մասնակցում էին՝</u>

Վարդան Խաչատրյանը, Աննա Կարապետյանը, Անի Սահակյանը, Սուսաննա Սահակյանը, Հրանտ Արշակյանը, Դավիթ Այվազյանը, Նարա Հովհաննիսյանը, Վարդան Մանուչարյանը, Երվանդ Եղիազարյանը, Նարեկ Հովսեփյանը, Դավիթ Մարգարյանը

<u>Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Հովսեփ Առաքելյանը</u>

<u>Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Կարեն Իվանյանը</u>

Ավագանու նիստն իրավազոր էր, և այն հայտարարվեց բացված:

Նիստն ուղիղ հեռարձակվում էր:

Նախքան օրակարգը հաստատելը համայնքի ղեկավարը ներկայացրեց, որ անհրաժեշտ է օրակարգ ներառել ևս 1 հարց ««Սիսիանի բնակարանային կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության գույքը Սիսիան համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկում ընդգրկելու և անհատույց օգտագործման իրավունքով «Սիսիան համայնքի տրանսպորտ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը տրամադրելու մասին» որոշման նախագիծը: Հարցը դրվեց քվեարկության.

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Հարցը ներառվեց օրակարգ:

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 18-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՐԵՆ ԻՎԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի 2025 թվականի ապրիլի 18-ի հերթական նիստի օրակարգը՝
   1) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի 2025 թվականի բյուջեի կատարման առաջին եռամսյակի ընթացքի մասին.
   2) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 124-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին.
   3) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 17-ի թիվ 16-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին.
   4) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի հողային հաշվեկշռին համաձայնություն տալու մասին.
   5) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի սեփականություն հանդիսացող Շենաթաղ բնակավայր Աղբյուր թաղամաս թիվ 1 հասցեում գտնվող 0,092 հեկտար ջրային նպատակային նշանակության հողամասը «ԱՐՍԵՆ ԵՎ ՆԵՐՍԵՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին.
   6) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Սառնակունք բնակավայրում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին.
   7) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Դարբաս, Թասիկ, Տոլորս, Հացավան բնակավայրերում գտնվող հողամասերի նպատակային նշանակությունը փոխելուն հավանություն տալու մասին.
   8) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 14-ի թիվ 011-Ա և 012-Ա որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին.
   9) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին.
   10) «Սիսիանի բնակարանային կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության գույքը Սիսիան համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկում ընդգրկելու ևանհատույց օգտագործման իրավունքով «Սիսիան համայնքի տրանսպորտ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը տրամադրելու մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 043-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ԱՅՎԱԶՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ղեկավար Հ.Առաքելյանի հաղորդումը Սիսիան համայնքի բյուջեի 2025 թվականի

առաջին եռամսյակի ընթացքի մասին՝ համաձայն բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության՝ 1-6 հատվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Զեկուցող Դ. Այվազյանը հանգամանորեն ներկայացրեց 1-ին եռամսյակի կատարողականը:
Հարցը դրվեց քվեարկության:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 044-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ԹԻՎ 124-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ԱՅՎԱԶՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և 83-րդ հոդվածի 2-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով ու «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 124-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.
   1) որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «եկամուտների գծով՝ 2658395.7 հազար դրամ» բառերը և թիվը փոխարինել «եկամուտների գծով՝ 2751523.5 հազար դրամ» բառերով և թվով:
   2) որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «ծախսերի գծով՝ 4387043.9 հազար դրամ» բառերը և թիվը փոխարինել «ծախսերի գծով՝ 4480171.8 հազար դրամ» բառերով և թվով:
   3) որոշման 1-ին կետի հավելվածում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն 1-ից 3 հատվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Զեկուցող Դ. Այվազյանը հիմնավորեց բյուջեում կատարվող բոլոր փոփոխություններն ու լրացումները:

Համայնքի ղեկավար Հ. Առաքելյանը մանրամասնեց և նշեց, որ 1200000 ՀՀ դրամը նախատեսված է բակային հատվածներում խաղահրապարակներ և այգիներ կառուցելու համար: Բոլոր բնակիչները արդեն տեղեկացված են, որ ովքեր բակային տարածքները ցանկապատել և մշակել են, դրանք վերանալու է:
1800000 ՀՀ դրամը՝ Շաքիի մանկապարտեզի համար է նախատեսված: Քանի որ Շաքիի մանկապարտեզը դպրոցի ներսում էր տեղակայված, այս պահին դպրոցը քանդված է և նոր դպրոց են կառուցում, մեր թվով 40 երեխա առանց մանկապարտեզի են մնացել: Համայնքի վարչական շենքի առաջին հարկում սենյակներ կան, տրամադրենք և նորոգենք, որ մեր երեխաները հաճախեն մանկապարտեզ:
Որոտան կինոթատրոնի շենքի մոտակա այգին վերադարձվել է համայնքին և 2300000 ՀՀ դրամը՝ շենքի դիմացի հատվածի կապիտալ վերանորոգման համար է:
Բազմաթիվ բնակիչների խնդրանքով, քանի որ համայնքում չկա գործող հանրային զուգարաններ, պլանավորված է կառուցել 3 հատ զուգարաններ և Վ. Ոսկանյանի արձանի մոտ ցայտաղբյուր, որի համար նախատեսված է 1500000 ՀՀ դրամ:

Պետության միջոցներով վերանորոգվել է Սիսիանի մարզադպրոցը, իսկ շրջապատը պետք է բարեկարգվի մեր միջոցներով, որի համար նախատեսվել է 880000 ՀՀ դրամ:
Մեր երեխաները հաղթել են բազմաթիվ համապետական մրցույթներում և պետք է մեկնեն արտերկիր, մարզիկներին աջակցելու համար նախատեսված է 4000000 ՀՀ դրամ:
Հարցը դրվեց քվեարկության:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 045-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 17-Ի ԹԻՎ 16-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀՈՎՍԵՓ ԱՌԱՔԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 3-րդ մասով ու 34-րդ հոդվածով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 17-ի «Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 16-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.
   1) որոշման 12-րդ հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
   2) որոշման 6-րդ հավելվածը լրացնել 42-րդ տողով՝

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Աշխատակիցների թվաքանակ	Հաստիքային միավորի քանակ	Պաշտոնային դրույքաչափ	Աշխատավարձն՝ ըստ դրույքաչափի
42	Երգիչ	1	0.5	167,400	83700

2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Դ. Այվազյանը զեկուցեց, որ նոր խմբագրությամբ շարադրված հավելվածը «Սիսիանի բնակարանային կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ինն է: Տվյալ ՀՈԱԿ-ից այն հաստիքներն են դուրս եկել, որը ներառված է «Սիսիան համայնքի տրանսպորտ» ՀՈԱԿ-ի հաստիքացուցակում, և որոշակի չափով աշխատավարձի բարձրացում է տեղի ունեցել:

Հ. Առաքելյանը ներկայացրեց, որ երգչի հաստիք ավելացրել են՝ ժողգործիքների անսամբլը համալրելու համար և նոր ավարտած, տաղանդավոր երեխա ունեն, կընդունեն աշխատանքի: Նաև մանրամասնեց «Սիսիանի բնակարանային կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ի աշխատավարձերի բարձրացման վերաբերյալ:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 046-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՐԴԱՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի «Հողամասերի պետական հաշվառման կազմակերպման և իրականացման կարգը սահմանելու մասին» N 656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի դրույթների և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Համաձայնություն տալ 2024 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված Սիսիան համայնքի հողային հաշվեկշռին (հողային ֆոնդի առկայության և բաշխման մասին հաշվետվություն)՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 047-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԵՆԱԹԱՂ ԲՆԱԿԱՎԱՅՐ ԱՂԲՅՈՒՐ ԹԱՂԱՄԱՍ ԹԻՎ 1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,092 ՀԵԿՏԱՐ ՋՐԱՅԻՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ «ԱՐՍԵՆ ԵՎ ՆԵՐՍԵՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՐԴԱՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 46-րդ, 48[1]-րդ, 57-րդ, 60-րդ հոդվածներով և 76-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի «ը» ենթակետն ու հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 2022 թվականի փետրվարի 4-ին տրված ՇԱԹ-29/669 թույլտվությունն ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի սեփականություն հանդիսացող Շենաթաղ բնակավայր Աղբյուր թաղամաս թիվ 1 հասցեում գտնվող 0,092հա ջրային նպատակային նշանակության ջրային գործառնական նշանակության հողամասը առանց մրցույթի կառուցապատման իրավունքով մինչև 2042 թվականի մարտի 31-ը տրամադրել «ԱՐՍԵՆ ԵՎ ՆԵՐՍԵՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը և սահմանել 70000 ՀՀ դրամ տարեկան վարձավճար:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Վ. Մանուչարյանը ներկայացրեց, որ «ԱՐՍԵՆ ԵՎ ՆԵՐՍԵՍ» ՍՊԸ-ն 2012թ. մեկ անգամ արդեն ստացել է ջրօգտագործման թույլտվություն և պայմանագիր է կնքվել 10 տարով, այս անգամ 20 տարով են կնքում պայմանագիրը և վարձավճարը սահմանում 70000 ՀՀ դրամ:
Հարցը դրվեց քվեարկության:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 048-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՌՆԱԿՈՒՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՐԴԱՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ և 29-րդ կետերով, Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման դրույթների, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված «Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի» 2025 թվականի մարտի 24-ի N 2/փ 104 դրական եզրակացությունն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Սյունիքի մարզի Սիսիան համայնքը (Սառնակունք բնակավայր) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերում կատարել փոփոխություն և համայնքային սեփականություն հանդիսացող 09-081-0102-0001 կադաստրային ծածկագրից 9,08719հա գյուղատնտեսական նշանակության արոտավայրը և 3,8128հա գյուղատնտեսական նշանակության վարելահողը փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության էներգետիկայի գործառնական նշանակության:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Վ. Մանուչարյանը զեկուցեց, որ ներդրումային մեծ ծրագիր է ներկայացնում՝ արևային կայան տեղադրելու համար, ընդամենը՝ 12.9հա, համայնքային սեփականության հողեր են:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 049-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԱՐԲԱՍ, ԹԱՍԻԿ, ՏՈԼՈՐՍ, ՀԱՑԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՐԴԱՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության

կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշումն ունկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Դարբաս, Թասիկ, Տոլորս, Հացավան բնակավայրերի համակցված փաստաթղթում կատարել փոփոխություն և համայնքային սեփականություն հանդիսացող 0,12հա բնակավայրերի բնակելի կառուցապատման, 0,074հա գյուղատնտեսական արոտավայր, 0,05հա գյուղատնտեսական այլ հողատեսք և 0,033հա գյուղատնտեսական արոտավայր հողամասերը փոխադրել էներգետիկայի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության կոմունալ ենթակառուցվածքների գործառնական նշանակության:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Զեկուցողը ներկայացրեց, որ 4 համայնքներում ներդրումային ծրագիր է, որը կարևոր է և իրականացնում է ՀՀ-ում Տարածքային զարգացման հիմնադրամը: Օրվա կարգավորիչ ջրամբարներ /ՕԿՋ/ պետք է կառուցի, տվյալ բնակավայրերի բնակիչները մաքուր ջուր օգտագործեն: Նույնը բոլոր բնակավայրերի համար պետք է կատարվի:
Հ. Դանիելյանը հարցրեց, թե ու՞մ կողմից է իրականացվելու շահագործումը և ինչպես է տրամադրվելու:
Վ. Մանուչարյանը պատասխանեց, որ օգտագործման իրավունքով տրամադրվելու է «Վեոլա ջուր» ՓԲԸ-ին:
Որոշման նախագիծը դրվեց քվեարկության:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 050-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի ԹԻՎ 011-Ա ԵՎ 012-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՎԱՐԴԱՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 34-րդ հոդվածով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Ծղուկ բնակավայրում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոխելուն հավանություն տալու մասին» թիվ 011-Ա և «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Սիսիան քաղաքի Որոտան փողոց թիվ 3/4 հասցեում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոխելուն հավանություն տալու մասին» թիվ 012-Ա որոշումների մեջ կատարել փոփոխություններ և որոշումների հիմքերը շարադրել նոր խմբագրությամբ.
«Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության

կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշումն ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.»:

2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 051-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՐԵՆ ԻՎԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2025 թվականի մայիսի 16-ին, ժամը 16:00-ին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 052-Ա)*

ԼՍԵՑԻՆ

«ՍԻՍԻԱՆԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ «ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՐԱՆՍՊՈՐՏ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՍՈՒՍԱՆՆԱ ՍԱՀԱԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 77-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 5-րդ հոդվածով, նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը,

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. «Սիսիանի բնակարանային կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված 376,132,000 /երեք հարյուր յոթանասունվեց միլիոն հարյուր երեսուներկու հազար/ ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքով գույքը հետ վերցնել և ընդգրկել Սիսիան համայնքի հաշվեկշռում՝ համաձայն հավելված 1-ի:
2. Սիսիան համայնքի սեփականություն հանդիսացող 545,087,180 /հինգ հարյուր քառասունհինգ միլիոն ութսունյոթ հազար հարյուր ութսուն/ ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքով գույքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Սիսիան համայնքի տրանսպորտ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն հավելված 2-ի:

3. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավարը ներկայացրեց, որ «Սիսիանի բնակարանային կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ը բաժանվել է 2 մասի, տրանսպորտային միջոցները ամբողջությամբ հանձնվում է նոր ստեղծվող հիմնարկին:
Որոշման նախագիծը դրվեց քվեարկության:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0
Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 053-Ա)*

Ավագանու անդամներ

ՀՈՎՍԵՓ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ԱՇՈՏ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԲԵԼԼԱ ԹԱՄՐԱԶՈՎԱ

ՀՐԱՉՅԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆԱԽՇՈՒՆ ՅԱԶՈՒԼՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՄԻՇԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՈՎՍԵՓ ԱՌԱՔԵԼՅԱՆ _____

Նիստն արձանագրեց Հարեն Իվանյանը _____